

էստ զբաղումս արեւելեան վասն սուրբ Եկեղեցեաց (Եկեղեցւոյս?)։ զոր դէպքս անյանջիւր աշխարհի վասն ասեանքն հարկաւոր պիտոյից ներքին» (անդ էջ 148—149)։

Եւ ստուգիւ ամենէն փառաւոր շինուածքն ունեցաւ Ս. Լուսաւորիչ ժամանակակից եկեղեցիներուն մէջ։ Բուզանդական պալէսթա (= արքունի) եկեղեցիներուն ճաշակով։ Ներքին կողմը ծաղիկներով եւ սրբազան նկարներով ծաղկեց Վեսարացի Նաթան մը։ Դեռ մինչեւ հիմայ, այնչափ նոր հրդեհներէն, նոր նորոգութիւններէն ու փոփոխութիւններէն ետքն ալ՝ սիրուն Եկեղեցի մ'է Ս. Լուսաւորիչ, որուն մէջ Կոլոտի անունն ու գործը չփոխուեցաւ միայն։ Նալեան, Կոլոտի աշակերտն ու յաջորդը, իր վարդապետին գործն ու փափաքը լրացուց, անշուշտ, շինելով Ս. Լուսաւորիչի գեղարուեստական եւ թանկագին խաչկալը (1761 Յուն. 16)։

Կոլոտ այնչափ սիրած էր Ս. Լուսաւորիչը, զոր կալուածներով ալ օժտեց, որպէս զի Եկեղեցին շնեղուի դրամի համար, եւ իր շիրիմն ալ հոն պատրաստուեցաւ — անշուշտ իր կամքով — յաւէտ մնալու համար անոր ծոցը։

Պէտք է դիտել որ Կոլոտին այնչափ ծախքերով եւ նեղութիւններով կառուցած այն գեղեցիկ շէնքին երկու փայտաշէն թեւերը, Ս. Խաչ եւ Ս. Կարապետ, նորէն մոխիր դարձան եւ 28 տարի (1771—1799) աւերած մնացին։ Բայց Կոլոտի օրինակն ու յիշատակը զօրավիգն եղան եւ անոնք նորէն բարձրացան իրենց հիմակուան ձեւին մէջ՝ ամուր եւ աղիւսակերտ։

ձեռքով արձանագրած է. «Եւ վասն շինութեան Սրբոյ Եկեղեցւոյն մնացեալ էր պարտք շահով՝ 20.000 զուռ. եւ որ ինչ Խէլը (= հասոյթ) գայր Եկեղեցւոյն՝ ի պարտուց շահն տային. վասն որոյ աղաւեցաք զօրհնեալ սարրաֆ Իշխանսն մեր եւ զայլ ժողովուրդսն, որք փոխ դրամ ետուն, որ շահն վերցաւ. Աստուծով եւ ի պարտուցն եւս կ'ազատուի» (Սեանք 1866, էջ 127)։